Մարտի 21-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

16/03/13թ. «Բանանց»-«Արարատ» խաղի նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության ներկայացուցչի չմասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 18-րդ կետի համաձայն՝ «Բանանց» ֆուտբոլային ակումբին տուգանել 30000 դրամ:

«Կիլիկիա-95» և «Կիկլիկիա-99» թիմերի առաջնություններին մասնակցելուց հրաժավելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «Կիլիկիա-95» և «Կիկլիկիա-99» թիմերին մնացած խաղերում գրանցել տեխնիկական պարտություններ, «Կիլիկիա» ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 դրամ:

17/03/13թ. «Շահումյան-ֆզ»-«Գյումրի-ֆզ» խաղին մարզահրապարակը լքելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 20-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «Գյումրի-ֆզ» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, «Գյումրի-Անի» ՀԿ-ին տուգանել 30000 դրամ:

«Արմավիր-ֆզ» թիմի առաջնությանը մասնակցելուց հրաժավելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 20-րդ հոդվածի 1-րդ կետի համաձայն՝ «Արմավիր-ֆզ» թիմին մնացած խաղերում գրանցել տեխնիկական պարտություն, Արմավիրի քաղաքապետարանի մարզադպրոցին տուգանել 50000 դրամ: